№ 207 Նոյեմբերի 21 (Դեկտեմբերի 3) 1880 Նոյեմբերի 21 (Դեկտեմբերի 3) № 207

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարուանը 6 րուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Յայտարարութիւնները տրւում են ուզղակի
Տիֆլիս. Редакція «Մշակ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունւում է ամեն ժամում:

Յայտարարութիւնների համար վճարւում են
երրորդական տառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"
ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
1881 թ. ԱՐԵՒԱԾԱԳԻՐ

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից).

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Ազատ ընդհանուր յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Թատրն լուրեր, VI Հեռագիրներ, VII Գեղիտօն և բանաստեղծական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ. կէս տարուան 6 ր., հինգ ամ. 5 ր., չորս ամ. 4 ր., երեք ամ. 3. ր. երկու ամ. 2 ր. և մի ամ. 1 րուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլի օրէնքը.—Ներքին տեսութիւն. Մեր կրեդիտական հիմնարկութիւնները. Նամակ Մօսկվայից. Նամակ Բաքուից. Նամակ Գուչէթից. Նամակ Խրտագրից. Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն. «Голосъ» լրագրի թղթակցութիւն. Թուրքիա. Ագեւեան գործեր. Նամակ Թիւրքայից.—«Մշակի» հեռագիրներ. Յայտարարութիւններ.

ՄԱՄՈՒԼԻ ՕՐԷՆՔ

Ներկայ հեռագիրը բերեց մեզ մի ուրախալի լուր, այն է որ տպագրական օրէնքները վերաքննող Ս. Պետերբուրգում բարձրագոյն հաստատված յանձնաժողովը վճռել է ազատել մամուլը վարչական պատիժներից և ենթարկել տպագրական խօսքի յանցանքներն ու զեղծումները ընդհանուր օրէնքներին, այսինքն դատաստանի քննութեանը:

Ու ճշմարիտ, իւրաքանչիւր ուրս հպատակ, ուրս պետութեան իւրաքանչիւր քաղաքացի իր ամեն յանցանքի կամ զեղծման համար պատասխանատու էր միշտ դատարանի առջև, իսկ գրողը, լրագրապետը վարչութեան կամայականութեան էր ենթարկված: Լրագրապետը, գրողը, հեղինակը բոլոր համաքաղաքացիների մէջ պետութեան միակ խորթ որդիներն, անհարազատ զաւակներն էին, որոնք չէին վայելում պետական օրէնքների նոյն բարիքները, որ վայելում էին միւս հպատակները:

Լրագրապետը, հեղինակը միշտ մնում էին անչափահաս, իրաւազուրկ համեմատելով միւս համաքաղաքացիների հետ:

Դեռ անգլիացի երեւելի բանաստեղծ և իմաստասէր Միլտոն ասում էր ,,ինչ կարող է լինել մի չափահաս մարդու համար աւելի վիրաւորիչ, քան թէ մինչև կեանքի վերջը միշտ համարվել աշակերտ, որ իր տեսարակները պէտք է ներկայացնի վարժապետի քննութեանը: Այդ դրութեան մէջն է հեղինակը, լրագրապետը ցեղօրի առջև: Լրեւակայեցէք ձեզ մի մարդ, որ ուսում է առել, աշխատել է իր ամբողջ կեանքը, հեղինակել է մի գրուածք կամ մի յօդուած լաւ մտածելուց, աշխատելուց, իւրաքանչիւր միտք, իւրաքանչիւր բառ կշռելուց յեոտյ, և յանկարծ մի պաշտօնեայ, որ նրա չափ գիտութիւն չունի, որ չէ կարող զգալ այն ինչ որ նա է զգում, ջնջում է նրա ստեղծագործութիւնը, նրա սրտից բղխած խօսքը, նրա մտքի զաւակը, նրա ուղեղի թարմ արտայայտութիւնը: Ո՜զգալ իրան ամբողջ կեանքը տարրական դպրոցում, կախված լինել մի խիստ ուսուցչից, որ դրատում է կամ ջնջում է աշակերտի տետրակները, ահա հեղինակի դրութիւնը:,,

Միլտոն խօսում էր միմիայն մի ցենզուրայի մասին: Իսայց որքան աւելի անտանելի է գրողի դրութիւնը երբ նա ենթարկված է լինում միաժամանակ մի քանի ցենզուրաներին, երբ կայ ընդհանուր ցենզուրա, հոգևոր ցենզուրա, վարչական ցենզուրա, փոստային ցենզուրա, օտար լրագրերի ցենզուրա, պոլիցիական ցենզուրա, և այլն:

Այժմ ուրսաց մամուլը ինքն իրան հարց է առաջարկում: Միթէ գրականութիւնը և լրագրութիւնը, որոնք ամեն տեղ ճանաչված են ոչ թէ միայն որպէս ժողովրդի կրթիչներ, բայց և որպէս տէրութեան բարեկամներ, միթէ մեզանում միատեսակ են համարվում, կամ աւելի վատնգաւոր են ճանաչված քան թէ մարդկային կեանքի միացած մեաւոր և նիւթական գործողութիւնները:

Ազատել մամուլը վարչական կամայականութենից, ազատել նրան բացառական օրէնքներից և ենթարկել նրան ընդհանուր պետական դատարաններին, նշանակում է արդարութեամբ վարվել, նշանակում է նայել վերջապէս մամուլի և գրականութեան աշխատողների վրա, ինչպէս և բոլոր միացած հասարակական գործիչների, բոլոր հպատակների վրա, հաւասարեցնել բոլորի իրաւունքները ընդհանուր օրէնքների առջև:

Այն օրից, երբ մամուլը և գրականութիւնը կենթարկվին հաւասարապէս միացած քաղաքացիների պետութեան ընդհանուր օրէնքներին, պետական ընդհանուր դատարանների իրաւասութեանը,—գրողները կը զգան որ իրանք էլ գործան ազատ մարդիկ, իրանք այլ ևս պետութեան անհարազատ որդիներ, նրա խորթ զաւակներ չեն: Ու այնուհետև գրականութեան և մամուլի համար կը սկսվի մի նոր և պայծառ գարագրութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿՐԵԴԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թիֆլիսում հրատարակվող «Тифлисск. Обозрѣніе» թերթի մէջ կարդում ենք հետեւեալ յօդուածը:

Վերջին ժամանակները մեր կրեդիտը աւելի և աւելի գժուարանում է: Պրիկազից և կալուածական բանկից արդէն փողեր չեն տալիս անշարժ կայքերի գրաւականով, այդ պատճառով շինութիւններից շատերը դադարել են շարունակվելուց և անշարժ կայքերի գրաւականով վերջվող պրոցենտը հասել է մինչև 15: Փոխադարձ կրեդիտի և Առևտրական բանկի մէջ վեկսելներով տրվող փողերի պրոցենտը նշանաւոր կերպով բարձրացաւ, իսկ կովկասեան Պրիկազը պով բարձրացաւ, իսկ կովկասեան Պրիկազը պով բարձրացաւ, և